

Մնում է միայն նկատել որ Ռի խմբի ուղիղ ընթերցումածն է լինելու («դ. չ. առ թ») և «Լամբրոնացու» օրինակում (=Ռի), թէև այդ մասին ոչինչ չկայ նշանակուած Կարինեանցի Բաղդատութեան մէջ: «Լամբրոնացու» օրինակը գտնուած է Արժ. Տէր Գիւտ քահանայի ձեռքում ուրեմն և Տէր Հօրն է մնում ստուգել այս ենթադրութիւնս: Մոյն ուղիղ ընթերցումածն է լինելու և Լէյպցիգի ձեռագրում (Ռի), եթէ միայն սրբագրութեան չէ ենթարկուած Վանանդեցու նման: Այդ օրինակն եղել է Բաղդատութեան ձեռքում քայքայ յարգելի գիտնականը երևի չէ նկատել: Անցեալ տարի Խորենացու այս մի քանի կէտերը ձեռագրերում խուզարկելիս՝ ինձ օգնեց սիրայօժար գործակցութեամբ դպ. Բագրատ Վարդապետեանցը, Մայր Աթոռիս միաբաններից:

ՄԻԱԲԱՆ.



ՄԵԾ ԿՐԻՏԻԿՈՍԸ

V.



(Հարունակութիւն *).

ացի գրականական քննադատութեան այս եղանակից, այսինքն յիշատակարանը Հիւսիսային ազգեցութեամբ մեկնելուց, Տէնը գործադրում է և մի ուրիշ եղանակ, այն է գուրս բերել յիշատակարանը ներքին պատճառից: Ի՞նչ է պատճառը. «Փակտ, որից կարելի է հետևեցնել ուրիշ ֆակտերի ընթիւնը, յարաբերութիւնն ու փոփոխութիւնը»:

Այսպիսի ներքին պատճառ՝ ըստ Տէնի, գրողի «գերիշխող ընդունակութիւնն» է կամ «հիմնական յատկութիւնը», այն յատկութիւնը որ կայ «էսսէ» հիմքում և ծառայում է իրրեւ նորա գլխաւոր արտայայտութիւն ինչպէս օրգանական, այդպէս էլ ոգեկան աշխարհում: Այսպիսով այս երկու աշխարհը միացնելով, Տէնը հետևեալ կերպով է լացատրում

«գերիշխող ընդունակութեան» վրայ հիմնուած հետազոտութեան մեթոդը:

Գերիշխող ընդունակութեան կամ հիմնական յատկութեան տէր մարդը՝ պատահաբար հաւաքուած յատկութիւնների և ձգտումների կոյտ չէ, ասում է նա, այլ կանոնաւոր մեքանիզմ՝ կամ օրոտեմ, եթէ՛ օրինակ, նա բանաստեղծ է, ամեն բան նորանում փոխադարձ կապակցութեան մէջ է գրտնուում, և՛ ոճը, և՛ ֆարուլայի ընտրութիւնը, և՛ բրնաւորութիւնը, և՛ հաւատալիքը, և՛ սովորութիւնները, և՛ հոգու և՛ տաղանդի բոլոր մասերը, այնպէս որ եթէ մէկը փոխուում է, միւսները չեն կարող մնալ նախկին դրութեան մէջ, Բայց եթէ մարդը կանոնաւոր մեքանիզմ է, այդ մեքանիզմը սակաւթիւ ոյժերով է շարժողութեան բերում: մեծ մասամբ մի ոյժով, որ հանդիսանում է իրրեւ նոցա ներգաշնակութեան պատճառ և պահպանում է նոցա միութիւնը: Այդ միակ ոյժը հեղինակի մօտ՝ սորա հոգու մէջ իշխող մի որ և է ընդունակութիւնն է կազմում: Ի նկատի ունենալով այն աչքի ընկնող դերը, որ կատարում է «գերիշխող ընդունակութիւնը» ոգեկան կեանքում, ստեղծագործութեան մէջ, Տէնը պնդում է որ կրիտիկոսի գործը այն չը պիտի լինի, որ մի որ և իցէ հեղինակ ընտրագրելու համար կուտակէ բազմաթիւ նկատողութիւններ, այլ այն, որ գտնէ նորանում գործող գլխաւոր ոյժը, «Ի՞նչ այդ հեղինակը վերին աստիճանի բազմաթիւ անձնաւորութիւն լինի, թող նրա վրայ անդրադառնան ընտանիքը, դրացիք, ժամանակակիցները, թող նա գտնուի իւր ընթերցանութեան, իւր հասարակական գիրքի, հաղարատոր հակառակ պատահականութեանց ազդեցութեան ներքոյ, թող անթիւ ու անհամար եկամուտ տարրեր ծծուին նորա մէջ ամեն կողմից» — բանի էութիւնը հոսանքի ուղղութիւնը որոշելն է, նորա ոյժը չափելն է և այն ուղին ցոյց տալը, որով նա առաջ է գնում: Ճանաչել աւարկան նշանակում է իմանալ պատճառը և հետևել նորան իւր հետևանքների ամբողջ շարքի վրայ»: Իւր այս տեսակէտը Տէն փայլուն կերպով արգելաւորեց իւր «Essai sur Tite Live» աշխատութեան մէջ, Եւս մի գործ որ մենք յանձնարարում ենք մեր պատմական գրականութեամբ զբաղուող բանասէրներին, մի գործ, որ բոլորովին նոր և ընդարձակ հորիզոններ կը բանայ մեր միամիտ և սահմանափակ հայեացքի առաջ, զրգելով մեզ աւելի հասուն և առողջամիտ պահանջներով մօտենալ մեր հին պատմիչների ուսումնասիրութեան:

Տէնի այդ աշխատութիւնը որ նուիրուած է մեծ հռոմէացի պատմագրի քննադատութեան և, ի դէպ

*. Տէն, նախընթաց համարը:

նկատենք, փրանսիական Ակադեմիայի մրցանակին արժանացած 1) մի կլասիկական օրինակ է՝ գրական յիշատակարանը՝ գերիշխող յատկութեան, թէօրիայով մեկնելու։ Այստեղ ամեն ինչ կարծես ինքն ինքեան անբռնադատ կերպով բոլորում է գործի հիմքում գրուած գերիշխող յատկութիւնից, այնպէս որ կարելի է կարծել, թէ նոյն իսկ թէօրիան առաջ է եկել կամ ամրացել է յաջողուած փորձի ազդեցութեան ներքոյ։ Յիրուսի մի տեսակ անըման թարմութիւն և ամբողջականութիւն է շնչում Տէնի այս երիտասարդական վաստակը՝ առում է ոյրոփ, Գերիէն, և այս յատկութիւնները խոստանում են նորան յաւիտեականութիւն, ինչ առաջադիմութիւններ էլ անէ պատմագրութեան ուսումնասիրութիւնը։

Թէ ինչ ունի ուսանելու հայ բանասէրը՝ փրանսիացի հեղինակի այդ աշխատութիւնից, կը տեսնէ, երբ դիմէ ուղղակի մեր մատնացոյց արած աղբիւրին, իսկ մինչ այդ՝ թող նա մեզ հետ միասին հետեւէ պրոֆ. Գերիէնին, որ ահա թէ ինչպէս է ամփոփում Տէնի քննադատութեան բովանդակութիւնը։

Այն գլխաւոր յատկութիւնը, որի ազդեցութեան ներքոյ գտնուում են Լիվիոսի ստեղծագործութեան բոլոր մնացեալ գծերը, Տէնը հետեւեալ ընդունակութիւն է անուանում. Լիվիոս իրնէ հետոք էր, Հետոք էին դարձնում նորան իւր ցեղի և դասակարգի ժառանգական յատկութիւնները։ Հետոք դարձրին նորան իւր դարը և իրան ժամանակակից գրականութեան մէջ տիրող ուղղութիւնը։ Պատմական հանգամանքները, այսինքն կայսերութեան հաստատուիլը, սահման գրին սակայն հետոքական տաղանդի ազատ արտայայտութեան, Լիվիոս այդ պատճառով անցաւ պատմութեան, բայց այդ ասպարէզը փոխադրեց՝ իւր հետոքական հակումները։— Լիվիոս պատմութեան մէջ ևս հետոք մնաց։

Այս գրութիւնը Տէնն անց է կացնում իւր գրքի մէջ, գիտելով թէ ինչպէս է անդադառնում Լիվիոսի հետոքութիւնը իւր պատմական երկասիրութեան վրայ, այսինքն նիւթի ընտրողութեան, իրողութիւնները կապելու և նոցա նշանակութիւնը 1)

բոլորեալ եղանակի վրայ, անձանց և բնաւորութեանց նկարագրութեան վրայ, նոյն իսկ պատմածի վրայ, պատմական անձանց բերանները, գնուող ճառերի վրայ, վերջապէս՝ մինչև իսկ ոճի վրայ։

Այն ամենը, ինչ որ նոր պատմական գիտութիւնը առարկում էր Լիվիոսին ի յանդիմանութիւն, — նախնական աղբիւրների մշակման բացակայութիւնը, «վաւերագրի» նկատմամբ եղած հետաքրքրութեան պակասութիւնը — այդ ամենը գուրս է գալիս անխուսափելի հետեւեալ հետոքական վերաբերութեան։ Լիվիոս շատ խղճմտաւոր է, համեմատում ու կշռում է իւր նախորդների վկայութիւնները, — բայց դժբաւ աղբիւրներ չեն, ինչո՞ւ նա աւելի խորը չի թափանցում, Տէն այս հարցին պատկերով է պատասխանում. «Ենչպէս երեւակայեմք մեր աղնուական հետոքին ամբողջ օրով գլուխը խրած՝ բորբոսնած յիշատակարանների մէջ, լամպարը ձեռին, մի որ և է հնագրական տաճարի անկիւնում»։ Իւր խօսքը եզրափակելով Տէնն ապացուցանում է որ հոգովայեցի պատմագրին, հետոքին, հենց այն պատճառով որ նա միայն հետոք է, պակասում է քննադատական խանդ, նա արհամարհում է բնիկ յիշատակարանները, զետեղում է իւր պատմութեան մէջ միայն հետոքական բնաւորութիւն կրող իրողութիւններ և նախնական հոգովեական բարբարոսութեան կոշտ ու կոպիտ գծերը ծածկում է ազնուական ոճի միակերպութեան ներքոյ։

Եթէ գերիշխող հետոքութիւնը պայմանաւորում է Լիվիոսի մի քանի պակասութիւնները, նրան է նա պարտական և իւր մի քանի արժանաւորութիւնները, օրինակ, այն, որ նա ունի պատմութեան փիլիսոփայութիւն, Լիվիոսը, որպէս տարեգիր, անհրաժեշտութիւն չէ զգացել իւր պատմած ֆակտերը իւրեանց պատճառների հետ կապելու, միատեսակ, մի պատճառով ղեկավարող իրողութիւնները ի մի ժողովելու և իւր նկարագրած պատմական պրոցէսի հիմքում գտնուող ընդհանուր օրէնքը որոնելու ու գտնելու, եւ սակայն Լիվիոս պարզել է հոգովեական պատմութիւնը ղեկավարող հիմնական գաղափարը, այն է՝ որ բարբերի ապականութիւնը պատճառ եղաւ Հոգովի անկման, Լիվիոս գտաւ այդ գաղափարը, որպէս բարոյագէտ և Տէնն այդ ծառայութիւնը վերագրում է Լիվիոսի հետոքական հանձարին, Լիվիոս բարոյագէտ դարձաւ, որովհետեւ — համաձայն փրանսիացի կրիտիկոսի խորապէս ճիշդ նկատողութեան — փիլիսոփայութեան բոլոր բաժիններից բարոյագիտութիւնը ամենից աւելի հետեւեալ յատկութիւն ունի։

Այսպէս է ընթերցողի առաջ հետզհետեւ ամբողջանում հետոքի «գերիշխող յատկութեան» շուր-

1) Տէնի այս գրութեան մասին Ակադեմիայի առաջ զեկուցողը պատմաբան Ալիքսանդր Էրդուանովը կրիտականի աշխատութիւնը և ցոյց տալով նրա մի քանի թույլ կողմերը, այսպէս վերջացրեց իւր ճառը. «Նորհաւորեմք սակայն հեղինակի, պ. Տէնի՝ այս ազնուափայլ և ուսումնական սկզբնաւորութիւնը գասական գրականութեան շրջանում և այսպիսի թեկնածուք ցանկանք մեր մրցանակներին և այսպիսի ուսուցիչներ՝ մեր զբարոյական մատող սերնդին»։

ջը պատմութեան Լիվիոսի և Նորա գործի պատկերը։ Բայց ընթերցողը միևնոյն ժամանակ ձիշդ և որոշ գաղափար է ստանում պատմագրութեան մի առանձին տեսակի մասին—Հռետորական և Նորան հակառակ մի բոլորովին ուրիշ պատմագրութեան պատկերին—էլիսիոսի։ Յոյց տալով Նոր շաւիղը՝ Տէնը գնաց այդ շաւղով։

VI.

1870 թուի անբախտ պատերազմից յետոյ Տէնը վճռեց որքան կարելի է օգտակար լինել իւր հայրենիքին։ Կոյութիւն ունեցող կուսակցութիւններէն աչ մէկին չը յարուելով նա որոշեց գիտական ճանապարհով գտնել այն հասարակական և քաղաքական ձևեր, որ յարմարագոյնը լինէր անվերջ երկպառակութեանց մատնուած Ֆրանսիայի համար։ Տէնի առաջ արդէն կազմուել էին Նոր պատմագրական իդէալի գծերը։ Երբ նա երկտասարդական համագման ամբողջ ջերմութեամբ քննում էր հռովմայեցի հռետոր—պատմաբանին, Քսան տարի յետոյ նա սկսեց գործադրել Նոր պատմագրութեան մեթոդը։ Ֆրանսիայի նորագոյն պատմութեան վրայ Տէնի կենսագիրներէն մէկը պատմում է որ երբ հրաշակաւոր գերմանացի պատմաբան Զիրէլը Փարիզում յեղափոխութեան պատմութիւնն ուսումնասիրելիս, կամեցաւ հնագրանից վերցնել ձեռագիրների մի քանի կապոց, հնագրանսպետը ապշեցրեց գերմանացուն, բացադանչելով։ «Մի գիպէք այդ սրբազան փոշիներին, պարոն, նոքա այդտեղ են ԳՅ թուականից սկսած, Իրերի այս վիճակը ամօթալի երեւաց Տէնի աչքում և նա անձնատուր եղաւ մի այնպիսի տենդային աշխատանքի, որին հագիւկարող էր դիմանալ նոքա տկար առողջութիւնը։ Աւելի քան քսան տարի Տէնն աշխատեց իւր հայրենիքի պատմութեան վրայ և սակայն Նորա գործը որ բովանդակում է հին ռէժիմի, յեղափոխութեան և Նապոլէոնի ժամանակի պատմութիւնը, թերակատար մնաց։ Աւերջին հատորը լոյս տեսաւ հեղինակի մահից յետոյ, այն էլ առանց վերջին գլուխների։ Սակայն «Ժամանակակից Ֆրանսիայի ծագումը»—այսպէս է Տէնի ընդարձակ աշխատութեան ընդհանուր վերնագիրը—իւր այժմեան կերպարանքով էլ բաւական եղաւ որ մեր հեղինակը անցնի մեր ժամանակի ամենանշանաւոր պատմիչների շարքը։ Երբէք, ուսումն է պրօֆ Գերիէն, պատմութեան մէջ չի եղել մի այնպիսի նիւթ, որ այնքան հրաւիրէր հռետորական պատմագրութեան, որի համար նա այնպէս ստեղծուած լինէր, որպիսին «մեծ յեղափոխութիւնն» է։ Երբէք պատմաբանները չեն ունեցել՝ հռետորութեան մէջ ընկնելու այնքան զորգումներ, ինչպէս այս գէպքում։ — անցքի վեհու-

թիւնը, ժամանակակիցների ընդհանուր համակրութիւնը, լուծուած խնդիրների կարեւորութիւնը, գրելու որ գործիչների ողբերգական բախտը և վերջապէս՝ հայրենասիրական հպարտութիւնը յեղափոխական Ֆրանսիայի՝ հին Եւրոպայի վրայ կատարած անօրինակ յաղթութեանց պատճառով ճշմարիտ է։ պոզիտիվիզմը արդէն մի անգամ դիպել էր Ֆրանսիական յեղափոխութեան, — յանձին Օգիւստ Կոնտի, — բայց վերին աստիճանի անհետեղական կերպով, Պոզիտիվիզմի տեսակէտից դատապարտելով։ — արպէս քնազանցութիւն։ — ԺԸ դարու ուսցիօնալիզմը՝ նորանից բոլորով իրար սկզբունքներով հանդերձ—ինչպէս՝ ազատութիւն, հաւասարութիւն, ժողովրդագոյնութիւն։ — Կոնտը միևնոյն ժամանակ ընդունում էր յեղափոխութիւնը իրր մի պոյոյտ գէպի մարգկութեան վերածնութիւնն ու բարենորոգումը։ Իւր ներքուստ—հակասական հայեացքը յեղափոխութեան պատմութեան մէջ անցկացնելու համար, նա ծուռտեց Նորան երկու մասի։ — Սահմանադրական ժողովի գործունէութիւնը ընդունեց բընազանցութեան շրջան, իսկ ժակորէններին փառաբանեց որպէս ազգային հերոսների։ Բացի դրանից այս ամբողջ պոզիտիվիստական քննադատութիւնն իսկ՝ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ էլ—բոլորովանդակութիւնից զուրկ հռետորական վարժութիւն։ Յանձին Տէնի պոզիտիվիզմը դիպաւ յեղափոխութեան՝ գիտական մեթոդով սպառազինուած, Նոր մեթոդի երկու եղանակներն ևս—գաղափարը ֆակտերի վերածելը (անալիզը) և ֆակտերը բազմացնելը—լիուլի գործադրութիւն ունեցան։ Տէնի ամբողջ երկասիրութիւնը, որով Նոր շրջան սկսուեց Ֆրանսիական յեղափոխութեան մշակման և գնահատութեան մէջ բառացի իրագործումն է այն ծրագրին, որ նա ձեւակերպել էր 1852 թուին գիտական մեթոդը հաստատելիս—Tout l'effort de l'analyse est de multiplier les faits que désigne un nom. Եղափոխութիւն—այս մոգիչ խօսքը, որի մէջ ամփոփուած էր գաղափարների և զգացումների մի ամբողջ աշխարհ, ցրիւ եկաւ բաժանուեց «ֆակտերի» անսահման «շարքի» une file d'événements. Հռետորական պատմիչները տեսնում էին Նորա մէջ միայն անձանց և կուսակցութեանց հռետորական մրցում, որ կատարուում էր Փարիզում։ Եթէ պատմիչը դուրս էր գալիս Փարիզից, այդ միայն Նորա համար, որպէս զի նկարագրէ յեղափոխական գնդերի՝ վանդէացոց կամ դաշնակցութեան զօրաց վրայ տարած յաղթութիւնները, «Աշնուական հրաւերորին» կը սազէր միթէ դուրսը խրել հնագրանի բորբոսնած վաւերագրերի թողի մէջ, Այժմ կարծես խորտակելով այն ամբարտակները, որ եր-

կար ժամանակ պահում էին նրանց, ֆակտորը առաջ խուժեցին պատմական թատերաբեմի վրայ ամեն կողմերից: Ֆրանսիայի բոլոր հնագրաններից, եւ նոքա խուժեցին ոչ թէ անկազմ՝ բազմութեամբ, այլ վարպետութեամբ գասաւորուած՝ գումարտակ ներով, վաշտերով ու գնդերով, այսինքն պրակներով, գլուխներով ու գրքերով, որպէս մի գիտնական զօգորհանդիսի ժամանակ, Զի կարելի չը զարմանալ այն նշանաւոր ճարտարապետական արուեստի վրայ, որ երևան հանեց Տէն իւր յեղափոխութեան պատմութեան մէջ, Եւրաքանչիւր գրքի կամ գլխի սկզբին գալիս է «իշխող ֆակտը» և հետագայ ամբողջ պատմութիւնը ծառայում է նորան ի հաստատութիւն ու մեկնութիւն: Եւ եթէ չը նայած այդ ճարտարապետական շէնքին, ընթերցողը իրան ընկճուած է զգում, այդ նորանից է, որ «ֆակտը» նշանակութիւն ունի միայն հետազոտողի համար, այն ինչ ընթերցողը շտապում է դէպի այդ ֆակտն արտայայտող «խօսքը»:

Բայց պատմութիւն գրելու հոգեւորական և գիտական եղանակների կոնտրաստից աւելի զարմանալին է մի ուրիշ կոնտրաստ, պատմիչի և այն մարդկանց, որոնց գաղափարներն ու գործողութիւնները նա ուզում է նկարագրել: Նոքա XVIII դարու զաւակներ են, վերջին այսպէս ասած ամենահասուն շառաւիղը է՝ ֆրանսիական գպրոցի, որ կրթել է նրանց՝ կլասիկական ոգով (l'esprit classique), էսք (Տէն)—XIX դարու զաւակ, պոզիտիվիզմի պիտեր, իրան կրթած՝ գիտական ոգով—l'esprit scientifique. Ղոքա հակառակ աշխարհայեցութեան մարգիկ են, նոցա ելից կետերը նոյնքան հակասական են, որպէս նոցա նպատակները, Պարզեք այս բանը մի քանի օրինակներով, Երբ «հին ռեփիմը» ընկաւ անսպասելի, կարծես ինքն ըստ ինքեան, որովհետեւ նորա կողմնակիցները նոյնքան էին կորցրել իրանց հաւատը դէպի այդ ռեփիմը, որքան և նորա հակառակորդները, Ֆրանսիայի այն ժամանակուայ ներկայացուցիչների առաջ գրուեց այս խնդիրը՝ տալ իրանց հայրենիքին նոր պետական և հասարակական կազմակերպութիւն, ինչպէս այն ժամանակ սովոր էին ասել՝ սահմանադրութիւն (constitution), Ոչինչ չէր կարող դորանից աւելի հնչտ և պարզ լինել Հարկաւոր էր միայն բաց անել Մօնտեսքիտօն և գտնել այնտեղ իշխանութեանց հաւասարակշռութեան թէօրիան կամ հարկաւոր էր բաց անել Ռուսսօն և գտնել այնտեղ վեհապետ ազգի իշխանութեան որոշումը այդ իշխանութեան պարագաներով հանդերձ՝ ինչպէս անբաժանութիւն, անյապաւելիութիւն, անմեղանշականութիւն և այլն: Սիւսը, օրին, ճշմարիտ է, Միաբան ընդանցագէտ էր անուանում ասում

էր թէ սահմանադրութիւնը քաղաքական մերենագիտութեան վերացական պրորէմ է: Տէնի համար «սահմանադրութիւնը» մի ամբողջ շարք գիտական հետազոտութիւններից հանած վերջին եզրակացութիւն է, «եթէ կայ աշխարհիս երեսին գծուար գործ» դա սահմանադրութիւնն է, մանաւանդ լիակատարը, Փոխարինել հին շրջանակները, որոնց մէջ ապրել է մի մեծ ազգութիւն, ուրիշ՝ այդ ազգութեանը յարմարեցրած և հաստատ պահպանակներով գնել հարիւր հազար անուից բաղկացած մի մեքանիզմ՝ քսան և վեց միլիոն մարդու կեանքի վրայ և շինել այդ մեքանիզմը այնպէս ներդաշնակ, պատշաճեցնել նորան այնպէս լաւ, այնպէս ի դէպ, նոցա պահանջների և նոցա ընդունակութեան այնքան ճիշդ գնահատութեամբ, որ նոքա մտնեն նորա մէջ, իրեւ ինքն ըստ ինքեան, շարժուելով նորա մէջ առանց զարկերի, և որ նոցա յանկարծահաս գործունէութիւնը արտայայտուի իսկոյն հինաւուրց ուստի նայի դիւրութեամբ—այդպիսի մի ձեռնարկութիւն զարմանալի է և երևի թէ վեր մարդկային ոգու յոյժերից»:

Ֆրանսիական օրէնսդիրները, ձեռնարկելով իրենց գործը, սկսեցին «մարդու և քաղաքացու իրաւանց յայտարարութիւնից»: Այդ նշանակում էր, որ նոցա աչքում այդ երկու գաղափարները նոյնանիշ էին, որ նոքա տարբերութիւն չէին գնում Ֆրանսիացոց և մարդոց մէջ առհասարակ, որ ի նկատի ունենալով մարդոց, նոքա դուրս էին գալիս այն գաղափարից թէ մարդս բանական էակ է, նոցանից տարբեր՝ ժամանակակից պատմիչը այլպէս է նայում մարդու վրայ, նա մարդաբան (антрополог) է, և մարդուն որոշելիս՝ հաշուի է առնում նորա ծագումը, այն բնախօսական (ֆիզիօլոգիական) հողը, որ կապում է նորան կենդանական աշխարհի հետ, Վարդս մտակեր արարած է,—ասում է Տէն,—այդպէս է նա ըստ բնութեան և ըստ ֆիզիկական յօրինուածի, և երբէք ոչ նորա բնութիւնից, ոչ նորա յօրինուածից չի չքանալ այս սկզբնական կազմը: Վարդս ունի ժանիք, ինչպէս շունն ու աղուէնը, և շան ու աղուէսի նման ի սկզբանէ անտի նա խրելիս է եղել այդ ժանիքը ուրիշ արարածների մօտ մէջ, նորա յետնորդները կեղեքում են եղել միմեանց, քարի գործիքները ձեռներին՝ մի կտոր հում ձկան համար, Այժմ ևս նա գեռ միւնոյնն է, նորա բարբրը փափկացել են, բայց բնութիւնը չի կերպարանափոխուել, Պատերազմը թագաւորում է առաջուայ պէս, միայն նա սահմանափակուած է տեղով ու ժամանակով»:

Այս պատմիչը,—ասում է Գերիէն,—հոգեբան է և զուր չէ, որ նա հոգեբանական գիտողութիւններ

է արեւ Սալպէտրիէնում գծանոցում: «Եւրագա-
րութիւնը:—ասում է նա: պահապանի պէս կանգնած՝
մեզ է նայում» առողջ մարի սահմանին ինչպէս որ
հիւանդութիւնը միշտ կանգնած է առողջութեան
սահմանին: որովհետեւ տարրերի այն զուգորդու-
թիւնը, որ մենք անուանում ենք մարմնոյ առողջու-
թիւն կամ գիտակցութեան նորմալ գրութիւն, ոչ
այլ ինչ է: եթէ ոչ բախտի գիպում: որ գալիս է
և կրկնում է միմիայն հակառակ որեւոր վրայ կա-
տարուող մշտական յաղթունեան շնորհիւ: Բայց
այդ որեւոր միշտ կան: մի հասարակ պատահակա-
նութիւն կարող է նորանց դերակազմութիւն տալ:
նորանց քիչ բան է պակաս: որ յաղթեն
Բարոյական ինչպէս և ֆիզիկական նկատմամբ այն
ձևը, որ մենք անուանում ենք նորմալ: որքան էլ
յաճախ պատահի իրականութեան մէջ: այնու ամե-
նայնիս կեանքում առաջ է գալիս անթիւ ու անհա-
մար հնարաւոր աղաւաղումների մէջ: Բնութեան՝
մեզ համար մութ աշխատանքը: որի հետեւանքը (նոր-
մալ) գիտակցութիւնն է լինում: կարելի է համե-
մատել այն ստրկի գնացքի հետ: որ կրկեսի հան-
դեսներից յետոյ անցնում էր: ասպարիզով (ареш)
ձեռքին մի ձու բռնած: վաստակաւեկ առիւծների և
կշտացած վագրերի միջով: երբ նա հասնում էր նը
պատակին—նորան աղատութիւն էին տալիս: Այդ-
պէս է առաջ գնում ոգու կեանքը՝ հրէշային ճիգ-
տումների և վայրենի անմոտութեանց ժխորի միջով:

Քանի անգամ է հակուած եղել այդպիսի հոգե-
բան պատմիչը:—բացականչում է Քերիէն—յեղափո-
խութեան պատմութեան մէջ՝ իւր անտարանական
գիտողութեանց համար հաստատութիւն որոնելու:

Աերջապէս: այս պատմիչը հոգեբան է և ուրիշ միտ-
քով նա սովորեցրել է իրան՝ ուշադրութեամբ վերա-
բերուել ազգային ոգու արտայայտութեանց: Նա մեծ
ճարտարութեամբ է զանազանում միմեանցից մարդ-
կանց ցեղերը և ազգերը ըստ իւրեանց անհատական
կազմին: Քաղաքական ձևոց խնդրում նա առանձին
կարեւորութիւն է ընծայում ոչ թէ քաղաքական թե-
օրիւններին և ոչ թէ քաղաքական իգէալներին: այլ
ազգային բնաւորութեան: որ օրգանաբար կապուած
է քաղաքական ձևի հետ: ստեղծում է նորան այս-
պէս ասած: իւրեան ի գլուխ:

1789 թուին Փրանսիայի օրէնսդիրները դուրս էին
գալիս այն մտքից: թէ Փրանսիացիք միապետական
ազգ են: բայց իրանք չը նկատելով նորանց տուին
հասարակապետական սահմանադրութիւն: Նրեք տա-
րի անցած՝ նրանց յայտարարեցին հասարակապետու-
թեան հպատակ: բայց հաստատեցին նոցա վրայ
գիկտատուրա:

Ներկորդ կայսերութեան սկզբում երիտասարդ

Տէնին նորից ասում էին: Փրանսիացոց ոգին միապե-
տական է—le génie des Français est monarchique. Նա
վեր քաշեց ուսերը ու պատասխանեց: «ինչպէս կա-
մենաք: վերջներս բարի լինի»—grand bien nous fasse.
«Յամենայն դէպս թարգմանենք այդ նախադասու-
թիւնը գիտական լեզուով: Այդ նշանակում է: որ
հինգ հարիւր տարուայ ընթացքում Փրանսիացիք
գրեթէ միշտ միահեծան կառավարութիւն են ունե-
ցել: որ լինելով սնափաւ և դիւրահաղորդ: նոքա չը
գիտեն ինքնուրոյն լինել իրենց կարծիքների և գոր-
ծողութիւնների մէջ որ լինելով թէորետիկ և ծաղ-
րածու: նոքա վատ են գրում և աւելի վատ են
յարգում օրէնքները: որ լինելով կենդանի և փութ-
կոտ՝ նոքա իրանց վճիռների ինչպէս և յեղա-
փոխութիւնների մէջ չափազանց շուտ: չափազանց
սաստկութեամբ և յանդէպս են յափշտակում
էնթուզիազմով կամ երկեւղով: Ճակատագրա-
կան (ֆատալիստիքական) ճշմարտութիւնը վեր է ան-
ում քաղաքական պատմութեան ֆալս: և բարո-
յական սովորոյթների որոշ խմբի: Այժմ մենք հաս-
կանում ենք նորան և կարող ենք քննադատել նո-
րան: ստուգել: ապացուցանել և սահմանափակել:

Իւր ամբողջութեան մէջ «գիտական մեթոդը:
այսպիսի նիւթի վրայ գործադրուած՝ Տէնի ձեռքի
տակ երեւան հանեց իւր բոլոր արժանաւորութիւն-
ներն ու պակասութիւնները: Պատմական պատկերի
ահագին կտաւ: պատկերի: որի կենտրոնական ֆի-
գուրները միայն ուրաւագրուած էին: լցուեց մինչև
անկիւնները: Ըննութեան ներքին յարկերը: որի
տանիքի և զարդանկարների վրայ աշխատել էին
պատմիչները: գրուեցան ամուր հիմքի վերայ: որ-
տեղ մտան անթիւ աղիւսներ: Նախկին պատմիչների
մօտ 1789 թուի ալմալի անցքերի և 1792
թուի դրդոցների մէջ: որոնք Փրանսիայի պատմու-
թեան ուրիշ ուղղութիւն տուին: մի արանք կար:
որ անհասկանալի էր դարձնում գործի ընթացքը:
Տէնը իւր տոկոսն հետաղտութիւններով պարզ և
որոշ ցոյց տուեց: թէ ինչ նշանակութիւն ունեցաւ
Փրանսիայի համար իշխանութիւնը վերացնելը: և
Փրանսիայում հաստատուած «անիշխանութեան»
(de l'anarchie spontanée) ճարտար նկարագրութիւնը:
որ արաւ Տէն: բացատրում է ոչ միայն ծագած քա-
օւր: այլ և այն: թէ ինչ նոր կարգ պէտք է դորա-
նից ծնուէր:

Այսպէս և ժակոբէնեան շրջանում ամբողջ Փրան-
սիայից հաւաքած ֆակտերը պարզեցին «հակալու-
թեան» (տեքրորի) բուն իմաստը: Կոնվենտի նիստե-
րի դահլիճում: բանտերում և գիւօտինի հրապա-
րակում խաղացուող «դրամատիքական» երևոյթից
նա (տեքրորը)՝ Տէնի պատմածի մէջ՝ փոխուեց տըն-

տեսական, սոցիալական երևոյթի, ժողովրդական աղէտի, որ ցոյց է տալիս թէ ինչու Պրանսիան իւր փրկութիւնը որոնում էր կորսիկեցի «կոնգրտիէր» գրոշակներէր տակ, Բայց դրա փոխարէն միւս կողմերը մնացին ստուերում: օրինակ՝ սահմանադրական ժողովի մեծ օրէնսդրական գործը, որ հիմնուեցաւ ազատութեան և հաւասարութեան սկզբունքները կեանքի մէջ անցկացնելու համար—որ երկու տարուայ մէջ «Ֆէօդալական» Պրանսիան դարձրեց «ժամանակակից»:

Իրեւելից Երանոսեան յայտարարեց, որ զիտական մեթոդը նոյն արդիւնքները տուաւ պատմութեան մէջ, ինչպէս և հոգեբանութեան: Ինչպէս հոգեբանութեան հիմնական գաղափարը—մարդկային է—փոխուեց, դարձաւ «անցքերի մի շարք» une file d'évenements,—այսպէս և 1789 թուի անցքը դարձաւ անցքերի միջոցով և նորա միջի հոգին դուրս թռաւ, նա կորցրեց այն, ինչ որ նորան տալիս էր անհատական բնաւորութիւն, հրապոյր և ազդեցութիւն, այսպէս ասած՝ պատմական «նշաններ»: «Գիտական մեթոդի» գործադրութիւնը յեղափոխութեան պատմութեան վրայ՝ խորը հետք կը թողնի պատմագրութեան մէջ՝ նա ոչ միայն հարստացրեց և խորացրեց այդ անցքի մասին մեր ունեցած տեղեկութիւնները, այլ և նա անհնարին դարձրեց հետազոտական պատմագրութեան նախկին եղանակները: Ինչ վերաբերում է անցքի և նորա գործիչներին գնահատութեան, նշանակելի է, որ այս նկատմամբ «դուական (պոզիտիվ) պատմագրութիւնը» իւր բացասական քննադատութեան շատ կէտերում համաձայնեց «իդէալիստիքականի» հետ: Տէնի յեղափոխութեան պատմութեան երևան գալուց շատ առաջ՝ իդէալիստիքական պատմագրութեան փայլուն ներկայացուցիչներէց մէկը՝ հերոսների պաշտամունքի առաքեալ Վարլէյը իւր յեղափոխութեան պատմութեան մէջ կարծես վաղօրօք՝ ձեականակերպել էր Տէնի բոլոր դրութիւնները: Այն Փիլիսոփայութիւնը, որ ծագեցրեց յեղափոխութիւնը և առաջնորդեց նորան, Վարլէյի ասելով՝ դուռ կործանիչ բնաւորութիւն ուներ Ռուսսօյի փոխ առաջ «մարդու իրաւանց» թէորիան ներկայացնում էր լոկ «տրամաբանութեան մի խաղ՝ իմաստակի հնարագործութիւն, նոյնքան անտեղի, որքան անկանոն բայերի թէորիան»: Իշխող բարոյագիտութիւնը հիմնուած էր եպիկուրեիզմի վրայ և ամփոփում էր իւր մէջ ընդհանուր երանութեան խոստումն Անհաւատութիւն, դատարկ բարբառներ, զգայականութիւն—սակայից ու հաւատի զսպանակները: Նա արձակեց բնազդմանց սանձերը և խորտակեց բոլոր պատուարները: Անբարոյականացած իշխանութիւնը փո-

խարինուեց անամօթ անիշխանութեամբ: Ինչի՞ կարող էր հասցնել ֆրաչեօր անաստուածների խորհրդով շարժուող վայրենացած ռաբիկների ժակերիաները կործանումը գլխաւորուեց, բնաւ վրայ մնացին հինգ զգայարանը և ինչ-որ-էն, անկշտումը—փառամոլութիւնը, Մարդու ամբողջ դէմոնական բնութիւնը երևան եկաւ ասի—աշխարհ—և դորա հետ միասին «մարդակերութիւնը»: Առաջ բերելով կարլէյեան քննադատութեան այս ուղին ու ծուծը, Տէնը նորա կրիտիկոսը դառնալով, շարունակում էր. «Աւելացրէք, սակայն, լաւ կողմը վատի վրայ և ցոյց տուէք արժանաւորութիւնները արատների հետ միասին: Այդ սկիզբներիցը հաւատում էին միայն ապացուցուած ճշմարտութեան և միայն նորան էին կամենում պաշտել: Այդ տրամաբանները հասարակութիւնը հիմնում էին արդարութեան վրայ և աւելի մեծ պատրաստականութեամբ իրանց կեանքը վտանգի կենթարկէին, քան իրանց ստեղծած վարդապետութիւնից կը հրաժարուէին: Այդ էպիկուրեանները իւրեանց համակրութիւններով ձգտում էին գրկել ամբողջ աշխարհը: Այդ գաղաւթները, այդ բանուորները, այդ ժակերը անհաս և անշուր, կուռում էին սահմանի վրայ մարդկային շահերի և վերացական սկզբունքների անունով: Անհանձնութիւն և ոգևորութիւն պոստիւ աւելի պակաս չի եղել, քան ձեզ մօտ, միայն նոքա արտայայտուել են ձեզ բոլորովին անծանօթ ձևերով: Նոքա նոյնպէս են սիրում եղել վերացական ճշմարտութիւնը, ինչպէս ձեր պուրիտանները աստուածային ճշմարտութիւնը: Նոքա նոյնպէս են հետեւել կրօնին և ձգտել են ընդհանուր բարօրութեան: Ինչպէս պուրիտանները ձգտել են անձնական բարօրութեան, նոքա նոյնպէս են կուռել հասարակաց շարի դէմ: Ինչպէս ձեր պուրիտանները՝ ոգու շարի դէմ: Նոքա նոյնքան վեհանձն են եղել, որքան վերջինները՝ առաքելի: Նոքա էլ ոչ նուազ հերոսութիւն են ունեցել, բայց աւելի համակրելի, դիւրընտել, ամեն բոլոր պրոպագանդայի պատրաստ, Եւրոպան վերանորոգող հերոսութիւն, մինչդեռ ձեր միայն ձեզ է ծառայել:

Ե. ՄԱԿԱՅԵԱՆ.

ՊԱՅՏՈՆԱԿԱՆՔ

«ԲԱԼՈՒԱԾԻ ԶՈՐԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈՒԻ

29 Ապրիլի Սինոն Ս. ԼՄԻԺԱՆԻ Ի ՆԿԱՏԻ առաւ գրութիւնն Կառաւարութեան Կովկասեան շրջանի ճանապարհաց հաղորդակցութեան յանուն Նորին Վեհափառութեան, որ է այս «Ի հաւաքածոյս կանոնադրութեանց